


ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE



ԱՉԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՏԱՐԹԻ ՕՐԵՐԸ

ԲՈՃԱՆՈՐԳՈՒԹԻՒՆ

ՆԳԻՊՑՈՍ

Տարեկան 40 Եգ. ողյ

Վեցամսայ 20

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 12 Ըր

Ազատիկ բաժանորդագրութիւն չի ընդունուիր .

Ծանուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին . Ձեռագիրները եւ չեն տուիր .

ԹԻՒՆ 6

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲՈՒԳԻՐ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍՆԱՆ

Արտակալ եզրկարգում կատարուեցան

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՈՆՁԱՊՈՒՏ Ս. ՊՐԻՆՊՈՒԼՆԱՆ

ԹԻՒՆ 6

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ձ Ե Կ Ո Յ Ց

Արշալոյս ի վերաբերեալ ա մէն նիւթական գործողութիւններ պիտի կատարուին փոխան ստացականներու, որոնք անպայման պէտք է ստորագրուած ըլլան վարչութեան Գանձապետ Մեծ . Տիրա Սարգիս Պիւլպիւլեանի կողմէ, և խմբագրութեան կնիքը պէտք է կրեն .

Հակառակ պարագային՝ ո՛ր և է ստացական անվաւեր կը նկատուի .

ԼԱՒԱՏԵՍ ԵՒ ՅՈՈՒՏԵՍ

(Optimiste et Pessimiste)

Հայկական խնդրոց արդի ստացած քիչ շատ սուր կերպարանափոխութիւններուն ատեն, բարեդէպ է որ վերեւ երկու ընկերափիլիսոփայական բառերուն վրայ մէկ երկու խօսք ըսուի գոնէ, եթէ ատենց ամբողջական վերլուծումը անմիջապէս բնիկ հնարաւոր չ'ըլլայ գէթ առ այժմ . . .

Այլսարհի ստեղծմանէն ի վեր՝ այս երկու իրարու ներհակ փիլիսոփայութիւնները միասին գոյութիւն ունեցած են, որկէ ծագում առած ըլլալ կը թուի՝ անյիշատակ ժամանակներէ հետէ՝ շատ անգամ սարսուռեցուցիչ և ողբալի հետևանքներու յանգող իրերահալած պայքարները . . .

Թէ՛ լաւատեսները և թէ՛ յոռետեսները համահասարակ կերպով լաւագոյնը կը տեսնեն, եթէ այդ փիլիսոփայութիւններուն երկրորդագունները հարցաքննուին . Կաղափարի խնդիր արդեօք . . . կարելի չէ որոշ բան մը ըսել այս մասին, որովհետև հազարաւոր տարիներէ ասդին անոր սահմանները որոշակի ճշգրտուած չեն ու այդ բառերը կը գործածուին ամենապարզ և լաւ ու դէշի իմաստով մը . և այս վերջին պարագային մէջ՝ լաւատեսները բընականաբար թուով շատ կ'ըլլան, եթէ ամէնն ալ հասարակ շարագործներէ խմորուած ըլլային : Ո՛չ ապաքէն և լաւ անով կ'սկսի խնդրոյ առարկայ բառը և լաւը ոչ ոք ուրիշին կուտայ . . .

Ապա ուրեմն ի՞նչ են լաւատեսները և ի՞նչ յոռետեսները :

Լաւատեսները ամէն բան վարդազօյն, և որ աւելին է՝ ոսկեզօյն կը տեսնեն . միշտ նպաստաւոր և յարաբերական իրենց փափաքին .

Իրերը տեսնելու և դատելու այս եղանակին մէջ մարդուն կազմուածքը, ջղային զբոսութիւնը ու խառնուածքն ալ մեծ դերեր կըրնան ունեցած ըլլալ : Ահաւասիկ բժշկական ձեռնհասութեան հարց մ'ալ կը ծագի հաս, որ այսօրուան նիւթէն դուրս է : Մարդ կայ որ դիւրահաւան կըլլայ, տկար շիջեր և համազօր գատողութիւն ունենալուն համար . իսկ մարդ ալ կայ որ չափազանց դժուարահաւան է, զօրաւոր շիջերով կազմաւորուած՝ և նոյնքան հեռատեսութեամբ օժտուած ըլլալուն պատճառաւ . այս վերջինները յոռետեսներն են, եթէ չենք սխալիր . . .

Լաւատեսները հպարտ՝ զուարթ ու խնդրոտ կ'ըլլան, հոգ չէ թէ՛ քիչ ժամանակէն տարամերժ իրականութիւնը գայ յուսախաբանութեան մասնել զիրենք . քայքայելով և հիմն ի վեր տուպալելով իրենց կառուցած սպանիական օղային զբոսակները :

Լաւատեսին նետած ամէն գընդակները անխտիր և միշտ հակառակորդին կուրծքը կը մխուրն և ըստ իր համոզման՝ կը խորտակեն անխնայ զայն ճաշկողին ամբողջ էութիւնը : Բայց երբ ճարտար և հմուտ բժիշկի մը խնամքին կը յանձնուի կարծեցեալ հէգ և մահամերձ վերաւորը՝ երևան կուգայ որ անոր ստացած վէրքը ո՛չ միայն մահացու չէ, այլ նոյն իսկ շատ թեթեւ ու դիւրաբոյժ ալ է :

Լաւատեսը մանր մունր հաշիւներ ալ կրնայ ունեցած ըլլալ, իր դիւրահաղորդ համակերպումներուն մէջ . ընկերական կեանքէն իր փառասիրութեան և այլ բաժիրները կորզել յաջողելու և իր անձնասիրութիւնը զգուշելի ու փայփայելի ընծայելու կրկին տեսակէտներով :

Տակաւին շատ մը բաներ կարելի է թուել լաւատեսին թաքուն յատկութիւնները ցայտուն կերպով արտաբերելու համար, բայց այս

թերթին սիւնակները չ'պիտի կրնան պարունակել զանոնք, ուստի զանց ընենք :

Ի՞նչ մ'ալ յոռետեսը ճանչնանք ու բաւական է :

Յոռետեսը թուժա առաքելալէն աւելի քերականաւոր ու ստէպ իր գատողութիւնը սրող ու զրգող խոհերու մէջ թաղուած՝ մէկիկ մէկիկ կը քննէ ու կը վերլուծէ իրերը և դէպքերը, ընկերական կարգ ու սարքը և այդ միեւնոյն կեանքին մէջ անց ու դարձ ընող բոլոր լաւ ու տգեղ իրականութիւնները . . .

Յոռետեսը երբ համոզուով նրկատէ իր լաւատես բարեկամին առջև յոխորտանքներն՝ և իրաւացի ու բանաւոր չի՛ գտներ զայն, կը տխրի ու կ'ափսոսայ անոր դիւրահաւան ձեւանալուն վրայ . . .

Յոռետեսը՝ ինչպէս ըսի, թերահաւատ է . ու յաւակնութիւնը չունի համոզուելու թէ՛ իրմէն մեկնող գնդակը կրնայ սղղակի իր նպատակին հասնիլ ու աւերներ գործել, երբ կատարելապէս համոզուած չէ թէ՛ լաւ նշան առած է դէպի նպատակակէտը :

Յոռետեսը կեանքի պայքարին մէջ ո՛չ մանր և ո՛չ ալ խոշոր հաջիւնք ունի անձնական . անիկայ և դուրս ալ ու անկաշառ գատաւորն է իր նմաններուն . աշխարհավար դիւանագէտի մը կը նմանի ան՝ վերապահոտ ու կասկածոտ, և արդէն և կասկածը դիւանագիտութեան ամենէն կարևոր ու պաշտօնական սընունդն է . ստէպ պատահած է որ այս վերջինները՝ դիւանագէտները՝ ամենափոքր պատահարի մէջ, մեծ իրադարձութիւններ կասկածած և յուսա՛րէպ չեն եղած . . .

Յոռետեսը իր համոզումները արտայայտելու ատեն՝ գուշակութիւն մը չէ որ կ'ընէ, այլ ամենապարզ եզրակացութիւններու վերայ հիմնուած ստոյգ հետեւութիւններ . ու եթէ՛ Տէր մի՛ արասցէ, դժբաղդ օր մը անոր նկատածները կատարուին, իր և լաւատեսի բարեկամները խաչը պիտի հանեն զայն՝ չիտակ հաշուած և ստոյգը նախապէս յայտարարած ըլլալուն համար . իսկ տգէտներուն քով՝ շարագուշակ մարգարէ մ'է ան :

Այս երկու դաղափարականներուն — թոյլ տուէք որ այսպէս յորշորջենք զիրենք — մէջ եղած տարբերութիւնը սա՛ է որ՝ լաւատեսները Իրական գործունէութեան անձանօթ մնալ ուզելով կը դատեն, կը գործեն ու կը խօսին, մինչդեռ յոռետեսները՝ մանրակրկիտ քննութեան արդիւնքով կը լուծեն առեղծուածը, կեանքի պայմաններուն ու պահանջներուն բաղադրական համեմատութիւնները նկատի ունենալով իրենց եզրակացութեանը իբր յենարան :

Իսկ որ այս երկու նկարագիրներուն վրայ շատ համառօտ տեղեկութիւն ունեցանք այսօր, լաւագոյն է որ՝ արդիական բոլոր իրադարձութիւններուն դէմ սկեպտիկ և վերապահոտ վերաբերուինք, մեր սրտերուն մէջ պաշտելիութեան յուշարձաններ կանգնելով հայ դատին օրուան բոլոր ախոյեաններուն ի յիշատակ :

ՄԵՐՍՆԵՏ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՃԵՆԳԸ ԼՄԵՆԸ

Կ Ա Մ ՏԻՊԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

(Շար . նախորդ թիւէն)

4. Պակաս փուն .- Ըստ ամենավերջին ծանօթութեանց, քունը՝ ո՛չ թէ աշխատութեան միջոցաւ մեր մարմնոյն հալած կամ մաշած մասերը կը նորոգէ, այլ մարմինը կը պատրաստէ յառաջիկայ գործունէութեան, այնպէս որ մարդը առաւօտները աւելի տրամադրելի կըլլայ որ և է գործի : Հետեւաբար այն որ պէտք եղածին չափ չի քնանար գիշերը . կատարեալ կերպով պատրաստ չըլլար հետեւեալ օրուան գործունէութեան :

Մարդ մը գոնէ օրը 8 ժամ քնանալ պէտք է : Դժբաղդաբար մեծ քաղաքներու ինչպէս նաեւ Գահիրէի մէջ գործի ժամերը շատ են, այնպէս որ մարդ հազիւ ժամանակ կը գտնէ զքօնելու կամ քնանալու :

Այսու հանդերձ պէտք է ամենախոհեմ կարգադրութիւնը ի գործ դնել այնպէս որ գոնէ քունը շատ չի վնասուի : Եթէ նոյն գործին մէջ մնալով



Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

403

Աղէքս. Տ. — Ձեր 13 Փետր. 914 թուակիրն ստացուած է. Ենթակալիք Ձեր շնորհաւորութեան փոխան, Հաճեցէք աշխատակցել:

Գահիրէ. Գ. — Ձեր առարկութիւնները շատ լուծած եւ հնարովի բաներ են: Ատոնք կրուին շարժիտ հնարածիտ գաւազարակներու կողմէն մեր խոյանքը կասեցնելու, որպէսզի իրենք անարգել շահագործեն խեղճ ժողովուրդին միամտութիւնը: Բայց եւաղևա չըկա՞յ:

Կողմէն փոփոխութիւն տարածանել թէ՛ «Արշալոյս» ը չպիտի կրնայ շարունակել եւ այս միջոցներով թերթը մերժել տալով մեզի յուսանատեցնել կողմէն: Ձեր ջան անօգուտ վատակ, Մենք այդ մերժողներուն անունը կարճատեգրենք մի այն, ի զպրոթեան կենաց:

«Արշալոյս» իր տարեկան հրատարակութիւնը ապահոված է արդէն. հակառակ եղած կողմնակի եւ կուսակցական անձեր մեր ծանօթութեան անվերապիտ աղտոտ ու գժուճ փոփոխութիւն:

Գալով ենթադրեալ եւ անգոյ ոստի կանական միջամտութեան, որուն կրթընած կերեւին մեր պատուաբան հակառակորդները, իրենց տգէտ հաւատարմանը շարժար խարելու համար, կ'ըսենք:

Օվա՛ կը սեռէ «Արշալոյս» ի նոր հրատարակութեան ատմ իսկ անոր համետափառ Տնօրէնը՝ նամակ մը ուղղած է ոստիկանութեան հրամանատար Ն. Վ. Հարովէյ փաշային, ամէն հաւանական արգելքներու առջեւ առնելու համար: Զգուշացէ՛ք ուրիմ, ո՞վ խայտառակ թուաներ: Ձեր բոլոր գաւազարական ննաբները շուրջ ինկած, խեղդուելու վտանգին առջեւ կը գտնուին: Զանազէ՛ք որ այսուհետեւ կատակի չեղէք լուրջ եւ պատուաճանաչ մարգարէս եւ: Ձեր թեկնածութիւնն ալ չափ մը պէտք է ունենայ: Ա՛լ բաւական է: Գաւաթը լեցուն է. չի յորդեցնենք:

Արարկիր, Մ. Ս. — Յունուար 19 թուակիրին ստացուած է երէկ: Ձեր հասցէին արդէն թերթը դրկուած է երկու ծրար:

Մեզի սխալ ճանչցած էք: Ձեր բարեկամները ստրուկ կարծեցին իրենց դիմացինը. եւ զիտէք որ չէր: Բարի կամեցողութիւնը ուրիշ բան է: Մեր փոխադարձ խոստումը յարգելի կը մնայ, եւ պէտք է գիտնաք որ՝ մենք ազնուութեան առջեւ միայն յարգանք ունենք միացեալները իրենք գիտեն, ժամանակը ամէն ինչ կը սրբաբարէ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աղէքսանդրիոյ և Գաւառներու համար գործակալներու պէտքը կայ. փափաքողները կրնան գիմել «Արշալոյս» յի խմբագրութեան հասցէին:

ՃԱՐՔՈՒԱՆ ՆՕԹԵՐ

Այս վերնագրով, Լա Պուրս Է. Ժիրսիէն կը հրատարակէ թարգմանիկ Պոլսոյ թղթակցին հետեւեալ իմաստով տեղեկութիւնները:

Վրաստանը ունիմ կարծելու թէ՛ կ'ըսէ թղթակցիցը, Հայկական Բարենորոգմանց Հիմնագրին հրատարակութիւնը տեղի չ'պիտի ունենայ, մինչև որ Բ. Գուարը մեծ պետութիւններէն չ'ստանայ երկու օտար ընդհանուր քննիչները, որոնց տարեկան վատահիլ Անաստուրի վեց նահանգներուն՝ որոնք երկու մասի պիտի բաժնուին, քաղաքական և վարչային անօրինութիւնները: Կը կարծուի թէ՛ բարենորոգու-

թեանց ծրագիրը (այժմ նոր անուանակոչութեամբ մը՝ Հիմնագիրը) որ Մեծ Եպարքոսին ստորագրուած թեանը կ'սպասէ, ընդհանուր քննիչներուն՝ ստորագրասեալ պաշտօնեաներուն վրայ ունեցած իրաւասութեանց սահմանները ճշգրտելուն հետ յարաբերութիւն ունի:

Վրաստանները և միւս իմաստները հաւասար վարչային ներկայացուցիչներ պիտք է ունենան Վանի և Պիթիւի նահանգներուն մէջ: Միւս նահանգներուն սակայն՝ ներկայացուցչութեան թիւը կրնայ համեմատական ըլլալ: Իսկ հանրային պահովութեանց հսկելու գործին մէջ — ինչպէս են ոստիկան զինուորները և ոստիկանները — կարելի եղածին չափ համահաւասարութիւնը պիտի պահուի:

Միւս կողմէ Էֆօ Էթիրսիէնի մասնաւոր գործակալութիւնը, փետրուար 23 թուակախու հետեւեալը կը հեռագրէ իր թերթին:

Վարձարգոյն Գուարը որ և է թիւնածու նշանակած չէ տակաւին, օտարական երկու քննիչներուն տեղը գրաւելու համար, որոնց պարտաւորութիւնը պիտի ըլլար՝ Հայկական նահանգներուն մէջ գործադրելի Բարենորոգմանց վրայ հրահելու: Այս յայտարարութիւնը մը թողուցած է զետպանական մարմնին վրայ:

ՇԷՐԻՖ ՓԱՇԱՅԻ ՄԱՀԱՓՈՐԶԻՆ ՀԵՏԵՒԱՆԻԲԸ

Շէրիֆ փաշա իր Մեջրուարիցէք թերթին մէջ ընդարձակ նամակ մը կը հրատարակէ իր վրայ գործադրուած մահափորձին իբր հետեւանք, ուրկէ մէկ քանի հատուածներ կը քաղենք հետաքրքրութեան համար:

Շէրիֆ փաշա երկարորէն խօսելէ յետոյ Մ. և Յ. Գոմիթէին կազմակերպական ինչ ինչ գաղտնիքներուն վրայ, կ'աւելցնէ:

Շէրիֆ փաշա Վէլյուրթիէթը — Սահմանադրութիւն — հիմնեց Փարիզի մէջ, Եւրոպային ճանչցնելու համար Սահմանադրական կառավարութեան ընթացքը և իր հին բարեկամ փէօն — Թիւրքոսին կողմէ գործադրուած ոճիրները, ինչպէս Ահմէտ Ռիզա պէյ Վէլյուրթիէթը հիմնած էր, Համիտական Ռէժիմը աշխարհի ծանօթացնելու համար:

Թուրքիոյ մէջ մէկը չկայ որ այս պահուս չգիտնայ թէ՛ կըսէ Շէրիֆ փաշա, Սահմանադրական կառավարութիւնը հաստատուելէն մինչև հիմայ, հինգ տարիներէ ի վեր, Մ. և Յ. Գոմիթէն — Իթիթիստը — իր գործնական բարեկամներն մէջ երկու անգամէն աւելի կրնայ հաշուել քաղաքական ոճիրները թիւը, քան ինչ որ գործած է Ապտիւլ Համիտ երեսուն տարուան մէջ:

Բայց այս ոճիրներէն Եւրոպայ տեղեկութիւն չունի, կ'ըսէ Շէրիֆ փաշա, որովհետեւ Գոմիթէն կ'պարտագրէ թերթներուն՝ խոհեմ լռութիւն մը պահել, ինչպէս տեղի կը ունենար հին ռէժիմին մէջ:

Եթէ Եւրոպան տակաւին չի հաւատար իթիթիստի կողմէ գործուած ոճիրներուն, Փարիզի մէջ Շէրիֆ փաշայի վրայ գործադրուած մահա-

փորձէն ալ յետոյ, պէտք է որ իր աչքերուն վրայ թանձր ստուեր մը քաշուած ըլլայ:

Երկար մանրամասնութիւններու մէջ մտնելէ և ներքին գործոց նախարար Թէլլաւթ պէյին նախկին ոստիկանապետ Ազմի պէյի հետ ունեցած յարաբերութեանց սահմանը ճշգրտելէ յետոյ, կ'աւելցնէ Շէրիֆ փաշա:

«Ազմի պէյ իր տարանեակներն ունէր, որոնցմէ մին, ոճրագործ Ալի ճէվաթ, իր շարագործութեան պատիճը իր կնանքովը վճարեց: Ուրիշ երկու քններն են, Իսկէնտէր Ռօզանպէրկ և Դերասան Պուրհանէտտին, որոնք բանտարկուած են, իսկ միւսները փախստական են:

Փախստականներէն Ազմի պէյ, որ մահափորձէն քանի մը օր առաջ Լոնտոն մեկնած էր, նայն իսկ Կ. Պոլիս երթալու համար Վիէնայի գիծը նախընտրեց, քան Փարիզը:

«Այժմ խօսքը Յրանսական Դատարանին է, կ'ըսէ Շէրիֆ փաշա. Ան պիտի գիտնայ աշխարհի ցոյց տալ թէ՛ Փարիզը Կ. Պոլսոյ արուարձաններէն մէկը չէ...»

ԹՈՒՒԻ ԿԻՆԵՐԸ

Թէև քիչ մը անհաւատալի կերևայ, բայց մեղքը հեռագրողին վիզը ըլլայ:

Մոխրաքաւի մասնաւոր Գործակալութիւնը, Լոնտոնէն 24 փետրուար (երէկուան) թուով հետեւեալը կը հեռագրէ իր թերթին:

Կ. Պոլսոյ հեռաձայնի գիծերուն բացումը տեղի պիտի ունենայ փետր. 28ին: Այս գիծը Ֆրանսոս — անգլիական ընկերութեան մը յանձնուած է: Մինչև այսօր բաժանորդագրուողներուն թիւը 4000 ի հասած է երեք կեղրոններով, որոնց մին Բերա, միւսը Պոլիս և Եւրոպը Գաղտնիք հաստատուած են: Պաշտօնեաները՝ եթէ թուրք օրինորդներէ զատ, մնացեալները Յոյն և Հայ են:

«Օսմանեան կառավարութիւնը իր բոլոր ջանքերը կը թափէ Թուրք կիններուն ալ գործ գտնելու համար, որպէսզի իրենց օրապահիկը հայթայթեն:

ՏԵՂԱԿԱՆ

Ն. Բ. ԽՏԻՎԸ  
Ն. Բ. Խտիվը առջի օրը Ապտիի Պալատան մէջ ունկնդրութեան ընթացում է Ն. Բ. Բրէնս Մօսամէտ Ալի փաշա, եւ նախարարապետ ու ներքին Գործոց նախարար Ն. Վ. Մօսամէտ փաշա Սայիտը:

ՀԱՅԿԵՐՈՑԹ  
Ն. Վ. Նախարարապետը նախընթաց երեկոյ Սափուա Օթէլին մէջ մեծ հացկերոյթ մը սարքած է. որուն հրաւիրուած են տեղացի եւ անգլիացի 75 բարձրաստիճան պաշտօնատարներ:

ՕՒՒՒՒՒՒՒՒՒՒ  
Յրանսացիներէն յետոյ թուրք օգանաւորներն են որ երկրպագու պիտի այցելեն:

Թուրք օգանաւորք Յէթի պէյ իրեն ուղկից Սատրք պէյի հետ Պէլլութ հասած են. եւ տեղացի ժողովրդեան կողմէ խանդավառ ցոյցեր կը կատարեն: Օգանաւորները երկրպագու կ'պատուին եւ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին զանոնք ընդունելու համար:

Առ այժմ հետեւեալ կարգաթոյցը հրատարակութեան գրուած է:

Ա. օրը՝ ընդունելութեան կարգադիր Մանախուժին կողմէ ի պատիւ իրենց տրուած սեղանին պիտի մասնակցին:

Բ. օրը՝ Ն. Բ. Խտիվէն պիտի ընդունուին Գուալատան մէջ:

Գ. օրը՝ Գոմիթէն իր կողմէ մէջ 300 հրախրեալներով հացկերոյթ մը պիտի տրուի. ուր Ն. Բ. Խտիվին բանակաւոր Ահմէտ պէյ Շափթի օգանաւորներուն ձօնուած տողազափութիւն մը պիտի արտասանէ:

Դ. օրը՝ Ն. Վ. Նախարարապետէն պիտի հրաւիրուին, եւ պատուներ պիտի կատարեն ընկերակցութեամբ Միտաստ պէյ Սամիի Իպրահիմ պէյ Րաթիպի, Հապիպ պէյ Լութֆուլլահի եւ Մօսամէտ պէյ Գիլիկի:

Ե. օրը՝ Օմար փաշա Թօսուն հրաւիր մը պիտի տայ:

Զ. օրը՝ Մօսամէտ փաշա Զիլար թէյի պիտի հրաւիրէ օգանուները:

Է. օրը՝ պաշտօնական ընդունելութիւններ եւ մեկնում գէպի Պոլիս:

Օգանաւորներուն ընդունելութեան ծախուց համար մասնախուժին բացած հանգանակութեան գումարը մօտ երեք հարիւր ոսկի կը կազմէ:

ՏԻՒՆ ԷՍՄՏ ՓԱՇԱ

Ալպանիոյ նախկին կառավարիչ Էսատ փաշայի կինը Եգիպտոս եկած է քանի մը օրուան համար: Մինչ ամուսինը անգլիս Բրէնս տը Վիտը Ալպանիոյ գահը կը բարձրացնէ իբրեւ թագուոր:

ՏԻՒՆ ԷՍՄՏ ՓԱՇԱ

Մանօթ զեղծարար Տիգրան պէյ (տարակոյս չկայ ինքնակոչ) որ ձերբակալուելով Եգիպտոս բերուած էր. անցեալ օր երես երեսի բերուած է տիկին Կրօթէնուիզի հետ: Երկու ամուսիններուն տեսակցութեամբ տեղի ունեցած է, հակառակ մէկ ժամու չափ տեսելուն:

ՅՕՐՕ ԷԿԼՕՆ

ՇԱՐԱ ՊԵՅԷ ԷԼ ՆԷՃՏԵՅԷ  
Փաշաքչիի վաճառատան զիմաց Գարթ Բօստըր Լուսանկարներուն սուզիման 10 գրուէն:  
ԵՍ ՊԵԼԷՇ

ՀԵՌԱԿԻՐ

ԱԼՊԱՆԻԱ ԿԸ ՊԱՐՊՈՒՈ

Վալոնա 23 Փետր. — Յոյները իրենց սիրած Ալպանական երկիրներն սկսան պարսկել:

ԲՐԷՆՍ ՏԸ ՎԻՏ

Վալոնա 23 Փետր. — Իշխան քր Վիսի Ալպանիոյ գահը բարձրանալու շուրջ, քոչոր ֆալսիք խախտանալու քեան մէջ որաւ ժողովարար իր նոր քաղաւորին խանդալատ ցոյցեր կազմակերպեց փողոցներուն մէջ. ժողովրդային միթիկ մը կազմուեցաւ եւ հայրենասիրական ձառեր արտասանուեցան. նոր արֆային կեռագիր մը ուղղուեցաւ, զայն ապահովեցնելով քե՛ հասակ ժողովրդեան վստահութիւնը կը վաշելէ:

ՍԵՐՊՈՑ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ

Լոնտոն 24 Փետր. — Սերպիոյ կառավարութիւնը պաշտօնական կերպով հրատարակած է, որով Պալլանտան պատերազմին մէջ ունեցած կորուստները կը հաշուէ 13000 մեռած եւ 48000 վիրաւոր:

ՄԻՒՆԻՐ ՓԱՇԱ

Փարիզ 24 Փետր. — Թուրքիոյ հին դեսպանը Փարիզ հասաւ Կ. Պոլսէն եւ պաշտօնական անձնատրուքեանց հետ կը սեւակցի, Թուրքիոյ փոխառութիւնը կը գրակցուէրու համար:

# T I R I N G

## Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱԿԻ ՓՈՂՈՑ ՆԱԽԻՆ ՓԱՍԿԱԼ

Վ Ա Ջ Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՂԱՆՈՎԻՆ ՑԻՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՓՈՒԹԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պօլոյ ամենամանօթ թիֆլիսյն Տան Գահիրէի նորահաստատ Մասնաճիւղն է .


**ԲՐԷՏԻ ՏՕՆԱԻՅԷ ԷԺԻՐԱԿԷՆ**  
16 Փետրուար 1914  
1886ինը 361րդ վիճակահանութիւն  
Ա. ՊԱՐԳԵԻ  
Թիֆ 325 515 կը շահի՝ 50,000 Յրանգ  
Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000 Յր.  
14085 43206 79374 91711 94500  
107956 116390 117161 122180  
130022 142507 149198 152333  
162805 167996 170342 193121  
206050 221512 244919 258972  
259535 296370 399949 335158

**Բ. ՍԷՌԻ**  
130րդ վիճակահանութիւն  
Ա. պարգև 474. 773 50,000 Յր.  
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Յր.  
419097 420730 427469 429517 443271  
448343 492710 512193 529796 547950  
549640 585054 587864 588675 593931  
604593 613853 635906 646564 676391  
677843 682136 703992 733012 745722

**Գ. ՍԷՌԻ**  
39րդ վիճակահանութիւն  
Ա. պարգև 128776 կը շահի 50,000 Յր.  
Թիֆ 257, 399 կը շահի 10,000 Յր.  
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Յր.  
18023 20016 62672 94045 105478  
106336 111191 121922 126804 157748  
184248 185256 248326 263755 264920  
289078 299092 343363 345289 353115  
372246 376101 391660 394874

### ՎԻՃԱԿԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՂԲԱՍԱՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

THE 'SINGER' MANUFACTURING Co



Շարա-էլ-Մզրապի Տափիզ Պրայնի սեփականութեանը մէջ .


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկերներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 22, 000, 000 ծախուած է :

400 հ աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախնդիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ  
ԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ ,  
ուշագրութիւն դարձնել  
իւրաքանչիւր 'եքենայի  
վրայ Սինկերի ներկա  
յառկանշիմ

Ձրի դասեր և նորոգու-  
թիւններ , յաճախորդաց  
տուններուն մէջ .

Վարձանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու  
յւ նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

Գին ՉԱՓ . . . ԱՇԽԱՐՀԻ ԳՈՂՈՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

ՃԱՇՏԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ  
ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19  
ԱՒԵՏԻՍ ՊՅՈՑԱՅԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-  
րաստուին եւրոպական եւ Արեւել-  
եան ընտիր կերակուրներ . պան-  
դուխտ երիտասարդները եթէ ան-  
գամ մը այցելեն մեծապէս գոհ  
պիտի մնան մատչելի գիներէն և  
սպասակութենէն . 14

**Ի. Ա. ԵՐԱՆ**  
Հրատարակութիւններ  
ԱՅՈՒՄԷՆԱԿԱՆ ԳԻՐԲԵՐ ԱՄԷՆԲՆ ԱԼ

Բառարան հայերեկե-անգլիերեկե սան .	50
Բառարան անգլիերեկե-հայերեկե »	75
Հայ. անգլ. եւ անգլ. հայ միասին տպ .	1 -
Պատ. գրուցարարութիւն հայ. անգլ »	1 50
Գործնական առողջաբանութիւն »	1 50
Սեռային առողջաբանութիւն »	1 25
Գործն. եւ սեռ. առողջ. միասին »	2 -
Ժողովրդային երգարան »	2 -
Երգարան եւ սեռ. առողջ. միասին »	3 -
Երգ. եւ գործն. առողջ. միասին »	3 -
Հասցէ՝ E. A. YERAN P. O. BOX 84, Sta. A. Cambridge, Mass.	

### ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ  
Փոխադրուած է Շարա Ապտ Էլ Ազիզ  
Ապտիի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գօսքիւմ մ-  
ւեննալու համար զանազան տեղեր դի-  
մած ու դժգոհ մնացած են , թող ան-  
շամ մը մեր վաճառատունը այցելեն .  
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-  
ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւն  
նը զոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը  
ամբողջովին ետ պիտի ստանան :

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ-  
ուելու փափաքողներուն համար , նը-  
պատաստուր առիթ մը պիտի ըլլայ .  
Ապտիի պայտարանները նկատու-  
ղութեան շին առնուիք , եւ անոնք որ  
ինծի կը դիմեն , զիւրաւ կրնան ըմբռ-  
նել ապագային տարբերութիւնները ,  
թէ գործի մաքրութեան եւ թէ գի-  
նեցու մասին :  
1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

### ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎԻՔԱՆ ԵՒ ԸՆԿ .  
ԱՂԵՔԱՆԴՐԻԱ (Եղիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեկի .  
Միացեալ Նահանգներու , Գա-  
նատայի եւ Հարաւային Ամերիկա-  
յի համար .

Գաղթականներու համար չափա-  
ւոր գին .

Աչքի բնութիւնը ճիշտաւ  
կը կատարուի տեղույս մէջ ,  
Մանրաւեստ սեղեկութեանց

հաւար դիմելը Գործակալութեան .  
ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ  
Հեռագրական Հասցէ -- ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկի թիւ 897  
Թուրքիոյ գաւառներու մէջ  
փոս - գործակալներ կը փնտտուին

Արտիստիկ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ

## ՏՊԱՐԱՆ

### Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս



ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արտիստիկ Եղիպտոսի ցարախնդարն  
նեղիւն Գործոց նախարարութեան , ամենամեծ խնամքով կը տպագրէ .

1. — Արտիստիկ Օրաքերքեր , Հանդէսներ , Պրոջիւրներ , Պարբերա-  
կաններ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տետրեր՝ եւ գրասենեակի ամեն ճեւակ սր-  
պագրական պիտոյքներ՝ ամեն շեղանով .
3. — Յայտարարութիւններ , շրջաբերականներ , նամակաւորութիւններ ,  
Շաղկապներ , եւ այլն .
4. — Հարսանեկան տուներ , մահազոյրներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցեն է , ց'նոր սնորհներին . Շարա  
Մուհամմէտ Ալի . Սիրասէլ երկարող քրտակէյի զօրին վրայ , Հարթ - էլ  
Մասապէկ - էլ Գասիմէ , թիւ 40 , Տիւր Միհաս Երիւնեանի յարկա-  
րածնին մէջ .